

ՍՓԻԻՌԸ ԱՆՏԱՐԲԵՐ ԶԷ

Posted on July 8, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Մինաս Գոճայեան, Խմբագրական ‘Նոր Օր’ ի, Լոս Անճելըս, 9 Յուլիս 2010

✘ Անտարբեր եւ ‘անգոյն’ սփիւռքի քով կայ զանգուած մը, որ մտահոգ է հայրենիքի ներկայով ու ապագայով: Տարբեր տարիքի հայեր աշխարհի չորս ծագերուն ոչ միայն հետաքրքրուած են պապենական երկրով, ժողովուրդին պայմաններով, անոր կենսամակարդակի բարելաւումով, այլեւ իրենց կարծիքն ու վերաբերմունքը ունին ժողովուրդին ու կառավարութեան յարաբերութեան, այլեւ սփիւռքի ու հայրենիքի փոխյարաբերութեան մասին:

Մինաս Գոճայեան, Խմբագրական ‘Նոր Օր’ ի, Լոս Անճելըս, 9 Յուլիս 2010

✘ Անտարբեր եւ ‘անգոյն’ սփիւռքի քով կայ զանգուած մը, որ մտահոգ է հայրենիքի ներկայով ու ապագայով: Տարբեր տարիքի հայեր աշխարհի չորս ծագերուն ոչ միայն հետաքրքրուած են պապենական երկրով, ժողովուրդին պայմաններով, անոր կենսամակարդակի բարելաւումով, այլեւ իրենց կարծիքն ու վերաբերմունքը ունին ժողովուրդին ու կառավարութեան յարաբերութեան, այլեւ սփիւռքի ու հայրենիքի փոխյարաբերութեան մասին:

Առողջ երեւոյթ մըն է ասիկա, որմէ պէտք է օգտուիլ գիտնան թէ՛ սփիւռքի եւ թէ՛ մանաւանդ հայրենի պետութեան իշխանաւորները:

Վերջերս ուշադրութեամբ ընթերցեցինք Քանատայի մէջ հրատարակուող Keghart.com համացանցային բարձրամակարդակ պարբերականի հերթական համարը, որուն խմբագրականին մէջ կ’արձարծուէր սոյն հարցը՝ որքա՞ն անկեղծ ենք սփիւռքահայերս հայրենի պետութեան հանդէպ մեր քննադատութեանց, գովերգութեանց եւ ‘դասեր տալու’ (երբեմն սոփեստութեան հասնող) մեր արտայայտութեանց մէջ: Խմբագրականին որպէս արձագանգ բազմաթիւ ընթերցողներ դրկած էին իրենց տպաւորութիւններն ու կարծիքները:

Ոմանք կը պնդէին թէ ներկայ եւ անցեալ իշխանութիւնները անատակ են երկիրը կառավարելու, որովհետեւ զանգուածին ընդհանուր վիճակը յուսահատական է, ինքզինք կը զգայ լքուած՝ ճակատագրի խաղերուն, վստահութիւն չունի ‘ընտրուած’ իշխանաւորներու հանդէպ: Ուրիշներ կ’ըսէին թէ կղզիացուած ու գրեթէ մեկուսացած, այլեւս մանաւանդ դուրսէն եկած օգնութիւններու վրայ յոյսը դրած ու բնական հարստութիւններէ զրկուած մեր երկրի կառավարութիւնը պէտք չէ ‘ամչցնենք’ մեզմէ անկախ ու գերիվեր ուժերու պարտադրած պայմաններուն տակէն հեշտութեամբ դուրս չկարենալ գալուն համար:

Ընթերցելով ու վերլուծելով կայքէջ այցելուներու այլազան եւ սրտցաւ արձագանգները, կրկին անգամ կու գանք մտորելու Հայաստան-սփիւռք կարճաժամկետ եւ

Երկարաժամկետ համակարգուած քաղաքականութեան մը որդեգրման շուրջ:
Պատահականութեան ձգուած բան մը կայ մեր գործակցութեանց մէջ, ուր կը պակսի
արհեստավարժութիւնը, մինչդէռ թէ՛ հայրենիքի եւ թէ՛ սփիւռքի մէջ չեն պակսիր անկախ
մտածող արհեստավարժներ՝ ըլլայ քաղաքականութեան թէ տնտեսագիտութեան,
միջազգային իրաւունքի թէ դիւանագիտութեան ասպարեզներու մէջ:

Մեր մտորումներուն երկրորդ կետը կը վերաբերի միակողմանի ուղղութեամբ իրարու
բաներ սորվեցնելուն: Հայրենի պատկան կազմակերպութիւնները յանկարծ
‘համահայկական’ գիտաժողովի մը փաստի առաջ կը դնեն մեզ ու մեզի կը թելադրեն թէ
ի՞նչ պետք է ընենք: Կը հասկնանք ի հարկէ, Հայաստանի մէջ է որ իր
պաշտօնակատարութիւնը կ’իրականացնեն հայրենի պետութեան գործադիր, օրէնսդիր
եւ դատական ճիւղերը, բայց երբ հարցերը կը վերաբերին ընդհանուր հայութիւնը յուզող
եական խնդիրներուն եւ կամ սփիւռքին, այն ատեն տրամաբանութիւնը ու
գործնականութիւնը կը թելադրեն նախօրօք համատեղ խորհրդակցութիւններու ճամբով
հասնիլ գիտաժողովի կամ համահայկական որեւէ հաւաքի մասին վերջնական
ծրագիրներու խմբագրման: Այս իմաստով բաւական լաւ ու արդիւնաւետ ճամբայ կտրած
է Հայաստան Հիմնադրամը, որուն փորձառութիւնը պետք է օգտագործել առաւելագոյն
չափով:

Սփիւռքի մէջ քիչ չեն սրտցաւ, անկեղծ ու բազմաթիւ զոհողութիւններու պատրաստ
հայրորդիներ. ուրեմն հարկաւոր է ի շահ հայութեան օգտագործել այս տրամադրութիւնը:

